ԳԱՅԱՆԵ ՍԱՀԱԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀՊՏՀ ասպիրանտ

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Շուկայական տնտեսության պայմաններում մենաշնորհների հայտնվելը և տնտեսության մենաշնորհացումն անցանկալի երևույթներ են, որոնք պահանջում են պետական կարգավորում: Ներկայումս տնտեսապես զարգացած բոլոր երկրներում իրականացվում է մրցակցության և մենաշնորհների իրավական կարգավորում՝ նպատակ ունենալով մեղմել կամ վերացնել մենաշնորհների առաջացրած տնտեսական և սոցիալական հետևանքները: Պետությունները տարբեր օրենքներ են ընդունել մենաշնորհների գործունեության բացասական հետևանքները կանխելու նպատակով, ընդհուպ՝ մինչև գնի սահմանված վերին սահմանը խախտելու համար դատական պատասխանատվության ենթարկելը:

Պատմականորեն մրցակցության պետական կարգավորման պահանջը դրսևորվել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ Եվրոպայում խոշոր ֆիրմաները ստանում էին պետական պատվերներ, իսկ փոքր ու միջին ձեռնարկությունները կազմալուծվում էին: Այդ շրջանում ձևավորվեց տնտեսությանը պետական միջամտությունը հիմնավորող գլխավոր տեսությունը՝ քեյնսյան տնտեսագիտությունը, որի առանցքային դրույթն այն էր, որ շուկան չի կարող ինքնակարգավորվել. մակրոտնտեսական անկայունությունը և տնտեսական ճգնաժամերը շուկային բնորոշ քրոնիկ միտումներ են: Ուստի անհրաժեշտ են կարգավորման կոշտ և ուղղակի մեթոդներ՝ սկսած շուկայի համակենտրոնացվածության աստիճանի վերլուծությունից մինչև ընկերությունների միաձուլումների արգելումը:

Կոշտ հակամենաշնորհային կարգավորման և առաջատար ընկերությունների վերակազմավորման անհրաժեշտությունը հիմնավորող տեսությունների կողմից շուկայի կենտրոնացվածության աճի և մրցակցության բացակայության միջև կապը հաստատվում էր «Կառուցվածք-վարքագիծ-արդյունք» հայեցակարգով, ըստ որի՝ ֆիրմաների վարքագծի և տնտեսության ճյուղերի արդյունավետության ցուցանիշների միջև առկա են սերտ պատճառահետևանքային կապեր, որոնք, հաշվի առնելով տեսությունները, առաջարկում էին շուկայի կառուցվածքի վրա ազդեցության միջոցով բարելավել համապատասխան ճյուղի արդյունավետության ցու-

ցանիշները՝ ռեսուրսների վերաբաշխման արդյունավետությունը, արտադրանքի շահութաբերությունը, տեխնիկական առաջընթացը և այլն:

Հակամենաշնորհային կարգավորման տեսությունն ամրապնդվեց հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ գերակայում էր տնտեսական ճգնաժամի հետևանքների և տնտեսության վրա ռազմական բեռի հաղթահարման պահանջը[1]:

XX դարի 70-ական թվականներից արդեն բազմաթիվ տնտեսագետներ պնդում էին, որ տնտեսական հարաբերություններին պետք չէ պետության միջամտությունը: Մրցակցային պայքարը նպաստում է առկա գիտելիքների կիրառմանը և նորարարությունների զարգացմանը, որն իր հերթին նպաստում է շուկայում մրցակցային առավելությունների ձեռքբերմանը:

Հակամենաշնորհային կարգավորման նկատմամբ նման այլընտրանքային մոտեցման հիմնական գաղափարախոսությունն այն էր, որ կատարյալ մրցակցության իրավիճակի՝ որպես էտալոն դիտարկումը նվազեցնում է պետական կարգավորման արդյունավետությունը՝ սահմանափակելով այնպիսի ֆիրմաների գործունեությունը, որոնք նպաստում են իրական շուկաներում մրցակցության զարգացմանը, ինչը հակասում է սպառողների և հասարակության շահերին: Մրցակցության աջակցման քաղաքականությունն ավելի ընդգրկուն հասկացություն է, քան հակամենաշնորհային կարգավորումը:

Գլոբալացման պայմաններում անհրաժեշտ է պահպանել շուկայի հավասարակշռությունն ու արտադրական հզորությունը, որը պետք է համապատասխանեցվի արտասահմանյան մրցակիցների հզորության մակարդակին: Երկարաժամկետ հեռանկարում արդյունավետ քաղաքականությունը պետք է հանգեցնի մրցունակության/արտադրողականության աճին՝ խթանելով ներդրումների հոսքը և նորարարական գործունեությունը[2]:

Ամփոփելով գիտական գրականությունը՝ կարող ենք առանձնացնել պետության կողմից «մրցակցություն-մենաշնորհ» հարաբերությունների կարգավորման երկու առանցքային մոտեցում, որոնց սկզբունքային տարբերությունների հիման վրա ստորև առանձնացրել ենք կարգավորման երկու ուղղությունների՝ հակամենաշնորհային և մրցակցության պաշտպանության քաղաքականությունների, համակարգային ամփոփ բնութագրերը (աղյուսակ 1):

---

[1] К.А. Писенко. Развитие антимонопольного права: Монография. – М.: РУДН, 2010. –с. 126-195.

[2] Porter Michael E. On Competition. – Bostom MA: Harvard Business School, 1998, p.432.

Աղյուսակ 1

Հակամենաշնորհային և մրցակցության պաշտպանության քաղաքականությունների համեմատական բնութագրիչները

Հ/Հ	Համեմատական բնութագրիչներ	Հակամենաշնորհային քաղաքականություն	Մրցակցության պաշտպանության քաղաքականություն
1.	Մրցակցություն-մենաշնորհ հարաբերությունների և արդյունավետության նկատմամբ համակարգային մոտեցումը	«Ավանդական» հայեցակարգ. կատարյալ մրցակցության պայմանները շուկայի արդյունավետության ապահովման չափանիշներն են: Մրցակցությունն անհամատեղելի է մենաշնորհի հետ	«Ավանդական» հայեցակարգի արդիականացում. մենաշնորհն արդյունավետության ապահովման կարևոր տարրերից է, որի ակտիվացման շնորհիվ ստեղծվում են ժամանակավոր նորարարական առավելություններ
2.	Մրցակցության էության ընկալումը և մրցակցային գործընթացների հետևանքները	Մրցակցությունն ուղղված է շուկայական իշխանության ձեռքբերմանը: Արդյունքում հարստությունը բաշխվում և վերաբաշխվում է	Մրցակցությունն ուղղված է նոր արժեքների (նոր շուկաների) ստեղծմանը: Արդյունքում ստեղծվում է նոր հարստություն
3.	Մրցակցության պետական կարգավորման կարգախոսը	Կատարյալ մրցակցության պայմաններից շեղումը հանգեցնում է մենաշնորհացման և արդյունավետության իջեցման	Կատարյալ մրցակցության պայմաններից շեղումը բացասական ազդեցություն չունի հասարակության բարեկեցության վրա
4.	Մրցակցային քաղաքականության նպատակը	Ապահովել հարստության արդար բաշխումը՝ հասարակական բարեկեցությունն ապահովելու նպատակով	Ապահովել ներդրումների և նորարարությունների աճը, որը կբերի հասարակության բարեկեցության և մրցունակության աճին
5.	Մրցակցային քաղաքականության հիմնական միջոցառումները	Գերակշռում են հակամենաշնորհային միջոցառումները	Գերակշռում են մրցակցության պաշտպանության քաղաքականության հիմնական տարրերը
6.	Մրցակցային քաղաքականության մեթոդներն ու գործիքները	Մենաշնորհ դիրք ունեցող ընկերությունների վերակազմավորում, խախտումների կարգավորման՝ per se սկզբունք	Իրավախախտումների կարգավորման per se սկզբունքի սահմանափակում, «խոհեմության» ծրագրերի տեղայնացում
7.	Շուկայի կամ մրցակցային միջավայրի վերլուծությունը	Ստատիկ մոտեցում: Կենտրոնում շուկայի կառուցվածքն է, շուկայի մասնակիցները և նրանց մասնաբաժինները	Դինամիկ մոտեցում: Կենտրոնում շուկայի սուբյեկտների վարքագիծն է և դրա ազդեցության գնահատումը

Ընդհանուր առմամբ, համեմատելով հակամենաշնորհային (ներկայումս, բացի ԱՄՆ-ից, մոդելը կիրառող երկրներից են նաև Արգենտինան,

Կանադան, Ճապոնիան) և մրցակցության պաշտպանության քաղաքականությունները (Եվրամիության անդամ-պետություններից բացի, մոդելը կիրառող երկրներից են նաև Ավստրալիան, Նոր Զելանդիան) և դրանց միջև առկա հիմնարար տարբերությունները, կարող ենք փաստել, որ աշխարհում այսօր գործում է համեմատաբար լիբերալ հակամենաշնորհային օրենսդրություն: Այսինքն՝ մրցակցության պետական կարգավորման ժամանակ առաջին հերթին շեշտը դրվում է ոչ թե ներքին շուկայում արտադրողների գործունեության նկատմամբ հսկողության սահմանման, այլ համաշխարհային շուկայում ազգային ընկերությունների զբաղեցրած դիրքերի ընդլայնմանն ուղղված պետական աջակցության վրա:

Միևնույն ժամանակ նշենք, որ ներկայումս հակամենաշնորհային օրենսդրությունների և քաղաքականությունների զարգացումը տեղի է ունենում ամերիկյան և արևմտաեվրոպական մոդելների մերձեցման միջոցով, ինչպես այն երկրներում, որոնք ընդունել են հակամենաշնորհային օրենսդրության այս կամ այն մոդելը, այնպես էլ այդ երկու մոդելները համատեղող երկրներում: Աշխարհում չկա մի երկիր, որը, չունենալով հստակ հակամենաշնորհային օրենսդրություն և դա իրականացնող ինքնուրույն ու անկախ մարմին, ունեցել է լուրջ հաջողություններ տնտեսական զարգացման հարցում:

Եվ չնայած այսօր բոլոր երկրներն էլ ունեն հստակ հակամենաշնորհային օրենսդրություն և դա իրականացնող ինքնուրույն ու անկախ մարմիններ, որոշ երկրներում մրցակցության կարգավորման հարցերում առկա են լուրջ խնդիրներ: Խոսքը վերաբերում է հատկապես անցումային տնտեսությամբ երկրներին, այդ թվում՝ ՀՀ-ին, որտեղ, ի տարբերություն զարգացած երկրների, որոնք կարողացել են ընտրել իրենց երկրին հատուկ կարգավորման արդյունավետ մոդելներ, առկա են որոշակի հակասություններ:

Ի տարբերություն արևմտյան երկրների, որտեղ նախ՝ առաջացել և զարգացում են ապրել շուկայական մենաշնորհները, այնուհետև դրվել են դրանց գործունեության կարգավորման հիմքերը, անցումային տնտեսությամբ երկրներում հենց սկզբից՝ XX դարի 90-ական թվականներից սկսած, երբ ընդունվեցին այդ երկրների ազգային հակամենաշնորհային օրենսդրությունները, շեշտը դրվեց հակամենաշնորհային կարգավորման վրա՝ շուկայական մենաշնորհների և մրցակցության բացակայության պայմաններում: Այդ պատճառով այսօր անցումային տնտեսությամբ բոլոր երկրներում հակամենաշնորհային օրենսդրության գործնական կիրառումը բավականին բարդ է, քանի որ այս երկրներում հիմնականում

պետք է գործ ունենալ ոչ թե մրցակցության պաշտպանության, այլ մրցակցային հարաբերությունների վերստեղծման հետ:

Անցումային շրջան ապրող երկրներում շուկայական տնտեսության ձևավորումը շարունակում է բախվել առանձնահատուկ բնույթի մենաշնորհների հետ: Այդ մենաշնորհները ձևավորվել են ոչ շուկայական միջավայրում և իրենց կազմավորման գործընթացով զգալիորեն տարբերվում են մրցակցային միջավայրում արտադրության կենտրոնացման արդյունքում ձևավորված մենաշնորհային կառուցվածքներից[1]:

Բացի վերը նշված հակասություններից, անցումային տնտեսությամբ երկրներին, այդ թվում՝ ՀՀ-ին, բնորոշ են նաև մի շարք թերություններ, որոնք թույլ չեն տալիս լիարժեքորեն իրականացնել մրցակցային արդյունավետ քաղաքականություն: Դրանց շարքում են դասվում.

1. իրավական համակարգը և օրենքների վատ կատարումը, որոնք անցումային տնտեսությամբ շատ երկրներում դեռևս չեն համապատասխանում բաց շուկայական տնտեսության և ազատ ժողովրդավարական հասարակության սկզբունքներին: Բացի այդ, իրավական ակտերն առանձին լոբբիստական և բիզնես խմբերի ճնշմամբ կամ քաղաքական խաղերի արդյունքում բազմաթիվ փոփոխությունների են ենթարկվում ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր մարմինների նախաձեռնությամբ,
2. ենթակառուցվածքների թերզարգացածությունը և տնտեսության մենաշնորհացումը,
3. անազնիվ մրցակցությունը կամ շուկա մուտք գործելու արգելքները, որոնք խաթարում են մրցակցության զարգացումը,
4. հարկային և մաքսային վարչարարությունը, հարկատուների նկատմամբ կամայական մոտեցումները, որոնք չեն նպաստում մրցակցային միջավայրի կայացմանը,
5. ստվերային տնտեսությունը և հարկերի վճարումից խուսափելու տարածված պրակտիկան,
6. կոռուպցիոն համակարգի համատարած երևույթները, որոնք մրցակցության խաթարման և մենաշնորհային գործունեության խրախուսման համար «բարենպաստ» դաշտ են ստեղծում:

Չնայած վերը նշված թերություններին՝ անցումային տնտեսությամբ բոլոր երկրները փորձում են պայմաններ ստեղծել տնտեսության և արտադրության տարբեր ճյուղերի զարգացման համար՝ կիրառելով իրենց կողմից ընդունված հակամենաշնորհային օրենսդրությունը: Այստեղ

---

[1] **Ա. Մարկոսյան**, **Մ. Մկրտումյան**, Բնական մենաշնորհների պետական կարգավորումը, Եր., 2002թ., էջ.4:

հարկ է նշել, որ յուրաքանչյուր երկրի համար շատ կարևոր է կարգավորման արդյունավետ ուղղության ընտրությունը, քանի որ հակամենաշնորհային օրենսդրությունն ու դա իրականացնող պետական մարմինների գործունեությունն ունեն շուկայում բարենպաստ մրցակցային միջավայրի ձևավորման հարցում որոշիչ դեր, ուստի միայն ճիշտ ընտրված օրենսդրությունն ու այն իրագործող մարմինների խելամիտ գործունեությունը կարող են նպաստել տնտեսության առաջընթացին:

Կարգավորման արդյունավետ մոդելի ընտրության խնդիրը կարևորվում է հատկապես սակավառեսուրս փոքր երկրների համար, որոնցից ուրույն մոտեցում է պահանջվում առաջադրվող խնդիրների լուծման համար: Սրանից հետևում է, որ երկրները պետք է հստակ պատկերացում ունենան, թե որ տնտեսական քաղաքականության որ մոդելն ավելի արդյունավետ կլինի տնտեսության համար: Մրցակցության և մենաշնորհների կարգավորման պետական քաղաքականություն մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել երկրի պատմական, տնտեսական և քաղաքական առանձնահատկությունները[1]:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա այստեղ մենաշնորհներն առաջացել են նախ՝ շուկայական հարաբերությունների ձևավորման և ոչ թե հասունության փուլում, իսկ դրանց առաջացման հիմքում մեծամասամբ ընկած են ոչ թե տնտեսական, այլ արհեստական գործոններ: Այսինքն՝ հանրապետությունում գործող բազմաթիվ ընկերությունների մենաշնորհային դիրքը պայմանավորված է ոչ թե տնտեսական առավելություններով, այլ վարչական լծակների գործադրման համակարգով: Հայաստանում կենտրոնացման գործընթացները երբևէ չեն կանոնակարգվել տնտեսական քաղաքականության՝ հատկապես հակամենաշնորհային գործիքներով, ինչի հետևանքով ձևավորվել է կլանային համակարգ [2]:

ՀՀ-ում գործող մենաշնորհները երբևէ չեն առանձնացել գիտատեխնիկական և նորարարական մշակումներով, բարձր տեխնոլոգիաների ներդրմամբ: Ավելին, դրանց առկայությունն ու հակամրցակցային գործունեությունն ըստ ամենայնի արգելակել են երկրի գիտատեխնիկական

---

[1] **Մ. Միքայելյան**, Տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (ատենախոսություն), Եր., 2005թ., էջ 6:

[2] **Աշոտ Մարկոսյան**, Հայաստանի Հանրապետության տնտեսության դիվերսիֆիկացման հիմնախնդիրները, «Սոցիալական մոտեցումներ Հայաստանի մարտահրավերներին. գլոբալ հեռանկարներ.տեղական իրողություններ (խորհրդաժողովի նյութեր)», Երևան, 2010, էջ 156:

և նորարարական ներուժի իրացումն ու աշխատանքի արտադրողականության աճը[1]:

Ներկայումս տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում տնտեսական, վարչական և օրենսդրական բարեփոխումների կարիք կա: Սակայն, անկախ այդ բարեփոխումներից, ներկայումս առավել կարևոր է երկրում ձևավորված մենաշնորհների, հատկապես ոչ բնական կամ ոչ մրցակցային գործընթացների ճանապարհով ներմուծման ոլորտում ձևավորված մենաշնորհների խնդրի լուծումը: Բարեփոխումներն առաջին հերթին պետք է ուղղվեն հենց այդպիսի մենաշնորհների կարգավորմանը և սահմանափակմանը:

Մրցակցային օրենսդրությունը պետք է տարբերակված մոտեցում ցուցաբերի տնտեսության տարբեր ճյուղերին՝ կախված դրանց՝ պետության համար ունեցած նշանակությունից:

Ընդհանուր առմամբ, կարծում ենք, որ արտահանող և ներկրող մենաշնորհների նկատմամբ վարվող քաղաքականությունը պետք է տարբերակված լինի, իսկ մրցակցային հարաբերությունների զարգացման համար պետք է ստեղծվեն և կիրառվեն այնպիսի մեխանիզմներ, որոնք թույլ կտան հարթել ստեղծված սոցիալ-տնտեսական լարվածությունը և բարձրացնել երկրի մրցունակությունը միջազգային շուկաներում:

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

ԳԱՅԱՆԵ ՍԱՀԱԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀՊՏՀ ասպիրանտ

Համառոտագիր: Հոդվածում քննարկվել են մենաշնորհների/մրցակցության պետական կարգավորման հիմնական ուղղությունները, դրանց բնորոշիչ առանձնահատկությունները և անցումային տնտեսությամբ երկրներում կարգավորման արդյունավետ ուղղության ընտրության հիմնախնդիրը: Հոդվածում քննարկվել են նաև Հայաստանում մենաշնորհների ձևավորման առանձնահատկությունները և դրանց կարգավորման մոտեցումները: Հոդվածում քննարկվել են ինչպես տեսական, այնպես էլ գործնական հարցեր:

---

[1] **Ատոմ Մարգարյան**, Ազգային նորամուծային համակարգը. Զարգացման մարտահրավերների համատեքստում, «ՎԷՄ», 2009 հուլիս-սեպտեմբեր, թիվ 2, էջ 99:

Բանալի բառեր. *մրցակցություն, մենաշնորհ, հակամենաշնորհային և մրցակցության պաշտպանության պետական քաղաքականություններ, անցումային տնտեսությամբ երկրներ, կարգավորման արդյունավետ մոդել:*

НАПРАВЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННОГО РЕГУЛИРОВАНИЯ КОНКУРЕНЦИИ И ПРОБЛЕМА ИХ ВЫБОРА В СТРАНАХ С ПЕРЕХОДНОЙ ЭКОНОМИКОЙ

ГАЯНЕ СААКОВНА АВЕТИСЯН
аспирант АГЭУ

Аннотация: В статье обсуждались основные направления государственного регулирования монополий/конкуренции, их характерные особенности и проблема выбора эффективного направления регулирования в странах с переходной экономикой. В статье также обсуждались особенности формирования монополии в Армении и подходы к их регулированию. В статье обсуждены как теоретические, так и практические вопросы.

Ключевые слова: *конкуренция, монополия, антимонопольная политика и государственная политика защиты конкуренции, страны с переходной экономикой, эффективная модель регулирования.*

THE DIRECTIONS OF THE STATE REGULATION OF COMPETITION AND THE ISSUE OF THE CHOICE OF THEREOF IN TRANSITION ECONOMIES

GAYANE SAHAK AVETISYAN
Ph.D. Student, Armenian State University of Economics

Abstract: The article discusses the main directions of the state regulation of monopolies/competition, the characteristic features of thereof, and the issues of choosing the effective direction of regulation in transition economies. The article discusses the specifics of creating monopolies in Armenia and approaches to regulating thereof, as well. Both theoretical and practical issues have been discussed in the article.

Keywords: *Competition, monopoly, anti-monopoly and competition protection policies, countries with transitional economy, effective model of regulation.*